



«ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

**ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍԱԿՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ**

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ

**Տարբերակման ազդեցությունը ուսման
առաջադիմության վրա**

ՀԵՂԻՆԱԿ

Առաքելյան Ալեքսան

ԽՈՒՄԲ /ԱՌԱՐԿԱ/

I /Մաթեմատիկա /

ՍԵՎԱՆ 2023

Բովանդակություն

Ներածություն	3
Տարբերակված ուսուցում, միջազգային փորձը	5
Ուսուցչի փորձառությունը	11
Ուսուցչի դիտարկումները	13
Եզրակացություն	16
Գրականության ցանկ	18

Ներածություն

Այս հետազոտական աշխատանքի նպատակն է ուսումնասիրել տարբերակված ուսուցման ազդեցությունը աշակերտների ուսման առաջադիմության վրա: Հետազոտությունը ներառում է ինչպես կրթության ոլորտում հայտնի տարբեր մասնագետների, այնպես էլ ուսուցչի դիտարկումների վերլուծությունը նշված միջամտության վերաբերյալ: Անվիճելի է, որ դասավանդման գործընթացում հաջողությունների գրանցման գրավականներից մեկը ուսուցիչների խորը առարկայական գիտելիքների առկայությունն է: Սակայն արդյունավետ ուսուցման համար ոչ պակաս կարևոր են նաև դասավանդման մեթոդներն ու գործիքները: Ուսուցիչների կողմից դասավանդման արդյունավետ մեթոդների ընտրությունը եղել և մնում է մանկավարժության հիմնախնդիրներից մեկը: Այդ պատճառով բոլորս էլ փնտրում ենք դասավանդման լավագույն մոդելներ, ռազմավարություններ՝ դասապրոցեսը հետաքրքիր և արդյունավետ դարձնելու համար: Դասավանդումը զարգացող պրոցես է և այդ ընթացքում ուսուցիչը սեփական փորձառությունը հղկելու, բարելավելու միջոցներ և հնարավորություններ է փնտրում: Նշենք, որ բազմամյա մանկավարժական աշխատանքի շնորհիվ ստացել ենք դասավանդման մեթոդների, ռազմավարությունների և ընդհանրապես ուսուցման հետ կապված նոր հմտություններ և գիտելիքներ, որոնց փորձարկումը և կիրառումը աշխատանքային գործունեության մեջ դառնում է ժամանակի պահանջ և անհրաժեշտություն: Ի վերջո, սեփական փորձառության հանդեպ քննադատական մոտեցումը վերլուծական դասավանդման կարևորագույն բաղադրիչներից է, որը հիմնված է վկայություններից և այլ հետազոտություններից բխող դատողականության վրա:

Ուսուցչի գերակա նպատակներից է աշակերտների առավելագույն ներգրավվածության ապահովումը դասապրոցեսին: Ներգրավվածության բարձրացումը ուսուցիչներից պահանջում է դասի ընթացքում տարբեր մեթոդների, ռազմավարությունների կիրառում: Այդպիսի մեթոդներից է տարբերակումը, որն ըստ բազմաթիվ հետազոտողների հանդիսանում է արդյունավետ դասավանդման կարևորագույն բաղադրիչներից մեկը: Տարբերակումը կիրառելի է դառնում այն պատճառով, որ դասարանում առկա աշակերտները նույնը չեն իրենց կարողություններով և գիտելիքներով: Տարբերակված ուսուցման գաղափարն ինձ

համար նոր չէ և այն կիրառել են դասի տարբեր փուլերում: Ասեմ, որ կիրառել են նաև անհատականացման ռազմավարություններ: Բայց նախկինում չեմ ունեցել այս ծավալի տեղեկատվություն վերջինիս ռազմավարությունների, դրական կողմերի և ռիսկերի մասին, նաև չեմ կիրառել համակարգված մակարդակով: Ուստի անհրաժեշտություն են համարում կատարել փոքր հետազոտություն 'Տարբերակման ազդեցությունը ուսման առաջադիմության վրա' թեմայով, բայց արդեն իսկ նոր գիտելիքներով և նոր մոտեցումներով:

Չետազոտությունը պատասխանելու է հետևյալ հարցերին.

- Ինչպիսի՞ ազդեցություն է ունենում տարբերակումը աշակերտների ուսման առաջադիմության վրա:
- Տարբերակման արդյունքում արդյո՞ք բարձրանում է աշակերտների ներգրավվածությունը դասապրոցեսի ընթացքում:
- Արդյո՞ք խմբավորումը չի առաջացնում դժգոհություններ աշակերտների մի մասի մոտ:
- Վարքագծային ի՞նչ փոփոխություններ կարող են նկատվել տարբեր խմբերում ընդգրկված աշակերտների մոտ:

Տարբերակված ուսուցում, միջազգային փորձը

Տարբերակումն ուսուցչից պահանջում է մշտական պատրաստվածություն, ծրագրավորված քայլեր և քրտնաջան աշխատանք: Ինչպես նշել է հողվածագրերից մեկը, անհատական տարբերություններին արձագանքելն ըստ երևույթին, ուսուցչական դերի ամենաբարդ ոլորտներից է և լուրջ վերաբերմունքի պարագայում մարտահրավերների տեղիք է տալու ձեր ողջ կարիերայի ընթացքում (Brooks, V and Bills, 2012):

Նշեմ, որ հետազոտողների կողմից տարբերակման արդյունավետության վերաբերյալ տրվել են ոչ միաբժեք գնահատականներ: Բայց, պետք է փաստեմ, որ իմ ուսումնասիրած հետազոտական գրականության գերակշիռ մասում հողվածագրերի կողմից տարբերակումը դիտարկվում է աշակերտների արդյունավետ ուսումնառության գործոններից մեկը և պետք է համարվի դասապլանավորման մաս: Տարբեր լսարաններում ունեցել ենք տարբերակման մեթոդի կիրառման հետ կապված քննարկումներ, որոնց ընթացքում ուսուցիչների կողմից հնչած կարծիքները փաստում են դասապրոցեսի տարբեր փուլերում տարբերակված մոտեցման կիրառման անհրաժեշտությունը: Գործընկերներիս հետ ունեցած զրույցների ընթացքում նույնպես ընդգծվել է տարբերակման ռազմավարությունների կիրառման անհրաժեշտությունը:

Տարբերակման գաղափարը նոր չէ կրթության ոլորտում: Այն կիրառվում է այն պատճառով, որ աշակերտները տարբեր են և ունեն տարբեր կրթական կարիքներ: Յուրաքանչյուր դասարանում սովորում են աշակերտներ, որոնք տարբեր են իրենց զարգացվածության մակարդակով, գիտելիքներով, առարկայի նկատմամբ ունեցած վերաբերմունքով: Նաև նրանք տարբեր հարթություններում են այն պատճառով, որ նախկինում հաճախել են տարբեր դպրոցներ, կամ նույն առարկան սովորել են տարբեր դասարաններում, ունեն մտածողության տարբեր ձևեր, հոգեբանական և մշակութային տարբերություններ: Իհարկե, սովորողների միջև ոչ բոլոր տարբերություններն են անդրադառնում նրանց դպրոցական կյանքի վրա: Հետազոտողների կողմից առանձնացվել են աշակերտների այն հիմնական տարբերությունները, որոնք կարող են ազդեցություն ունենալ իրենց ուսումնառությանն ուղղված պլանավորման վրա (Brooks, V and Bills, 2012): Դրանք են՝

- Կրթական տարբերություններ
- Հոգեբանական տարբերություններ
- Ուսումնառության ոճի տարբերություններ
- Սոցիալական, մշակութային և գենդերային տարբերություններ
- Հատուկ կարիքներ

Այսպիսով, ունենք բոլոր հիմքերը ենթադրելու, որ աշակերտներն իրենց հետագա ուսումնառությունը շարունակելու համար զինված են տարբեր կերպ: Իսկ ուսուցչի հիմնական նպատակն է ցանկացած դաս դարձնել հասանելի բոլոր սովորողների համար, ընդունելով, որ յուրաքանչյուրը ունակ է առաջադիմելու: Հաշվի առնելով սա, ուսուցիչները չեն կարող բոլորին դասավանդել ընդհանուր հիմունքներով և ստիպված են կիրառել տարբերակում, որի նպատակն է ապահովել դասարանում ներկա կրթական տարբեր կարիքներ ունեցող աշակերտների ուսումնառությունը, այդ թվում հատուկ կրթական կարիքներ ունեցողների, օժտվածների և տաղանդավորների: Շնորհիվ տարբերակման, յուրաքանչյուր սովորող պետք է հնարավորություն ստանա առաջադիմել իր ներուժի չափով: Այդ գործընթացում կարևոր է այն, թե ինչքանով է ուսուցիչը ծանոթ աշակերտների գիտելիքներին, նրանց անձնային հատկանիշներին, ուսումնառության մեջ առկա դժվարություններին և ուսումնառության ոճերին: Ուսուցիչը պետք է բացահայտի աշակերտի ուսումնառության ընթացքում դրսևորվող հետաքրքրությունները և դրանք հոգուտ աշակերտի օգտագործելու եղանակները: Տարբերակված ուսուցման արդյունավետությունը մեծապես կախված է ձևավորող գնահատումից, որն ուսուցչին հնարավորություն է ընձեռում հասկանալու, թե ուսումնառության որ մակարդակում է գտնվում աշակերտը և գործողությունների ինչպիսի ռազմավարություն կամ օժանդակություն է անհրաժեշտ այն բարելավելու համար: Այդ պատճառով տարբերակումը և գնահատումը փոխկապակցված գործընթացներ են (Brooks, V and Bills, 2012): Տարբերակումը սովորողին պետք է հնարավորություն ընձեռի բարձրացնել ներգրավվածությունը և դասի ավարտին գրանցել առաջընթաց: Այն ենթադրում է աշակերտների տրոհում խմբերի, ընդ որում նույն խմբում աշակերտներին պետք է միավորի ունեցած գիտելիքի, կարողությունների նմանությունը: Խմբերի միջև եղած տարբերությունները պետք է իմաստավորված լինեն կրթական տեսանկյունից: Ուսուցիչը պետք է հստակեցնի յուրաքանչյուր խմբի կրթական կարիքները և պատասխանատու է բոլոր խմբերին տարբերակված դասավանդում ապահովելու համար, ընդ որում բոլոր խմբերին ներկայացվում են նույն

նպատակները, որոնք դրված են ամբողջ դասարանի առջև: Այստեղ ուսուցչի համար առաջնային է պլանավորել ոչ թե ինչ, այլ ինչպես սովորեցնելը՝ ուշադրությունը դասավանդելուց տեղափոխելով դեպի ուսումնառություն: Կանոններից մեկը, որը պետք է գործի, դա այսպես ասած 80-20 կանոնն է: Հիմնականում, երբ կատարվում էր առաջադրանքով տարբերակում 'հին ձևով', ուսուցիչը կատարում էր աշխատանքի 80 % -ը, իսկ աշակերտները 20%-ը: Պետք է փնտրել ուղիներ, որոնց դեպքում աշակերտները կկարողանան ինքնուրույն կատարել առաջադրանքի առնվազն 80 % -ը , իսկ ուսուցիչները ոչ ավելի, քան 20%-ը: Այս դեպքում բարձրանում է աշակերտների ներգրավվածության աստիճանը, նրանք դառնում են ավելի ինքնուրույն և ինքնավստահ: (McNamara, 1999, p. 31):

Բազմաթիվ հոդվածներ կան, որտեղ ինչպես հետազոտողները, այնպես էլ ուսուցիչները կարևորում են տարբերակված ուսուցման անհրաժեշտությունը և նշում վերջինիս արդյունավետությունը մանկավարժության արդի ժամանակաշրջանում: Ինձ հետաքրքրել են մասնավորապես տարբերակված ուսուցման արդյունավետության դիտարկումները կապված մաթեմատիկա առարկայի հետ, որտեղ հետազոտության արդյունքները հաստատում են տարբերակման դրական ազդեցությունը աշակերտների ուսումնառության վրա (Мальцева Е. В., 2013):

Պետք է ընդգծել, որ տարբերակումը և անհատականացումը նույնը չեն: Տարբերակման դեպքում հաշվի են առնվում սովորողների խմբի կրթական կարիքները, իսկ անհատականացման դեպքում հստակեցվում են առանձին վերցրած յուրաքանչյուր սովորողի կրթական կարիքները: Տարբերակման դեպքում դասավանդումն ուղղված է սովորողների խմբին, իսկ անհատականացման դեպքում՝ առանձին սովորողներին (Абасов, З. А. , 2004):

Տարբերակված ուսուցումը ենթադրում է մի շարք ռազմավարությունների կիրառում, որոնցից ամենատարածվածներն են (G. Petty, 2004, p. 587).

- Տարբերակում ըստ առաջադրանքի(տրվում են ըստ բարդության տարբեր առաջադրանքներ)
- Տարբերակում ըստ արդյունքի(տրված առաջադրանքները նույնն են, բայց բաց են և տարբեր արդյունքների հնարավորություն են տալիս)
- Տարբերակում ըստ ժամանակի

- Տարբերակում ըստ ռեսուրսի(կատարում են նույն առաջադրանքը, կիրառելով տարբեր ռեսուրսներ)
- Տարբերակում ըստ օժանդակության

Այս ռազմավարություններն հաճախ կապակցված են օգտագործվում, թեպետ կարող են կիրառվել առանձին: Տարբերակումը հանդիսանում է դասի պլանավորման կարևոր բաղադրիչներից մեկը և ենթադրում է նախօրոք ծրագրավորված քայլերի հաջորդականություն, որտեղ հաշվի են առնված տարբեր խմբերի աշակերտների անհատական պահանջները: Չպետք է թյուր կարծիք ստեղծվի, որ տարբերակումը կիրառվում է միայն թույլ կարողություններով կամ ցածր առաջադիմությամբ աշակերտների կրթական կարիքները բավարարելու համար: Տարբերակումը ենթադրում է նաև արդյունավետ և խորը ուսումնառություն օժտված և տաղանդավոր աշակերտների համար: Այն հնարավորություն է ընձեռում առաջ մղել ավելի կարող ուժերին՝ նրանց տալով բաց հարցեր և առաջադրելով բարձր մակարդակի խնդիրներ(G. Petty, 2004, p. 587):

Սակայն տարբերակման հանդեպ ունեցած վերաբերմունքը միանշանակ չէ և տարբեր հետազոտողների կողմից դրականի հետ մեկտեղ նշվում են մի շարք վտանգներ, որոնք մտահոգությունների հիմք են հանդիսանում: Որպես բացասական կողմ աշակերտների՝ ըստ կարողությունների խմբերի բաժանումը դիտարկվում է ոչ հումանիստական: Այն կարող է 'պարունակել' սոցիալական անարդարության տարրեր, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ դասարանի բարոյահոգեբանական մթնոլորտի վրա: 'Ստորին' խմբերում ընդգրկված որոշ աշակերտների կողմից խմբավորումը կարող է համարվել նսեմացուցիչ, աշակերտները կարող են բարդույթավորվել և կորցնել մոտիվացիան: Իսկ 'վերին' խմբերում ընդգրկված աշակերտների մոտ կարող է նկատվել ավելորդ ինքնավստահություն և սեփական անձի գերարժեքավորում (С.В.Кыраева, 2009, с. 24):

Մեկ այլ հետազոտության արդյունքներով, ունակության հիման վրա ուսուցման խմբավորումը տարբեր դասարաններում կամ միևնույն դասարանի տարբեր խմբերում աշակերտների ներգրավմամբ, աննշան ազդեցություն է արձանագրել ուսումնառության արդյունքների վրա: Չնայած ըստ ունակությունների խմբավորումը տեսականորեն հնարավորություն է ընձեռում ուսուցիչներին՝ կենտրոնանալու յուրաքանչյուր թիրախային խմբի դասերի բովանդակության և ընթացքի վրա, այն նաև ուսուցչի մոտ

ստեղծում է ներխմբային համասեռության և միջխմբային անհավասարության վերաբերյալ ուռճացված պատկերացում (Robert Coe, Cesare Aloisi, Steve Higgins and Lee Elliot Major, 2014, p. 29):

Չետաքրքիր էր նաև հետազոտական մի հոդված, որտեղ ներկայացվել են չորս տարիների ընթացքում կատարված ուսումնասիրությունների տվյալները: Այն ներառում է ՄԹ վեց դպրոցներում մաթեմատիկայի դասավանդման 'ավանդական' և խմբավորման եղանակներով ստացված արդյունքների համեմատությունը, որը պարունակում է հետաքրքիր բացահայտումներ: Տարբերակման արդյունքում, բարձր կարողություններով խմբերում ընդգրկված աշակերտների ավելի քան մեկ երրորդի մոտ դժգոհություններ էին նկատվել կապված դասավանդման արագ տեմպերի և բարձր արդյունքներ արձանագրելու համար իրենց իսկ հանդեպ ունեցած մեծ ակնկալիքների հետ: Իսկ ահա 'ստորին' խմբերում ընդգրկված մի շարք աշակերտների մոտ դժգոհություն էր նկատվել, երբ նրանք ուսուցչի կողմից զգացել էին սահմանափակումներ իրենց ձեռքբերումների հետ կապված: Նրանց մի մասը նույնիսկ հրաժարվել էր մաթեմատիկայի դասերից, երբ զգացել էին, որ ուսուցիչն իրենց պատրաստում է շատ ավելի ցածր դասարանների քննական մակարդակով: Աշակերտների մի մասի համար անընդունելի է եղել խմբի ներսում դասավանդման տեմպը՝ որոշ աշակերտների համար չափազանց դանդաղ և ձանձրալի, իսկ մյուսների դեպքում չափազանց արագ և անհանգստացնող: Երկու դեպքում էլ արդյունքները եղել են սպասվածից ցածր, հաշվի առնելով աշակերտների հնարավորությունները դպրոց ընդունվելու պահին (Jo Boaler, Dylan William, Margaret Brown, 2000):

Այսպիսով, չորսամյա հետազոտության արդյունքներով կատարվել էր եզրակացություն, որ տարբերակված դասավանդումն ընդհանուր առմամբ չի հանդիսանում աշակերտների առաջադիմության բարձրացման արդյունավետ գործոններից մեկը, ավելին, այն կարող է բերել սպասվածից ավելի ցածր արդյունքներ: Չետազոտողները հանգել էին այն եզրակացությանը, որ մաթեմատիկա առարկայի դասավանդման արդյունավետությունը մեծապես կախված է երկու գործոններից՝ կրթական ծրագրերի հասանելիությունից և համասեռությունից: Առաջինն իր մեջ ընդգրկում է ուսուցանվող նյութի մատչելիությունը, որակը և մի շարք այլ առանձնահատկություններ, իսկ երկրորդը նախատեսում է դասավանդում ոչ թե

խմբերի, այլ խառը ընդունակություններով աշակերտների համար (Jo Boaler, Dylan Wiliam, Margaret Brown, 2000):

Ներկայացնեմ մեկ այլ դիտարկում. ‘Մեր դարի գիտնականները տարբեր ժամանակներում հանդես են եկել տարբեր լուծումներով՝ քարոզելով մեծ խմբով ուսուցում, փոքր խմբերով ուսուցում և անհատականացված ուսուցում: Խնդիրը ոչ թե փոքր խմբերով կամ անհատականացված ուսուցման մեջ է, այլ մտածողության և ջանքերի այն որակի, որը ձևավորվում է այդ համակարգում’ (Robert Coe, Cesare Aloisi, Steve Higgins and Lee Elliot Major, 2014, p. 13):

Այնուհանդերձ, ի գիտություն ընդունելով այս ամենը, յուրաքանչյուր ուսուցիչ պարտավոր է ինքն ընտրել դասավանդման մոդելներ և գործիքներ, ելնելով դասարանի և առանձին աշակերտների առանձնահատկություններից: Ժամանակի ընթացքում կուտակված փորձը հնարավորություն է տալիս կրկնել անցածը կամ հրաժարվել նախկին մոտեցումներից, որդեգրելով նորերը: Մեր նպատակն է պարզել, ինչն է լավ աշխատում, ինչը վատ՝ հետազայում կիրառելու կամ չկիրառելու համար: Իսկ դրա համար անհրաժեշտ է հավաքել լավագույն վկայություններ և ստեղծել ամենօրյա կիրառություն՝ կրթության որակը բարելավելու համար (Ben Goldacre, 2013):

Չետազոտական լուրջ արդյունքներ ստանալու համար անհրաժեշտ է իրականացնել լայնամասշտաբ նախագծեր՝ օգտվելով անհրաժեշտ փորձագիտական աջակցությունից: Ուսուցիչներիս համար այդպիսի հետազոտություններ կատարելը դժվար խնդիր է, բայց անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել փոքրածավալ հետազոտություններ՝ վկայություններից բխող դասավանդում իրականացնելու համար: Ինքներս դասավանդման ընթացքում որդեգրում ենք տարբեր ռազմավարություններ՝ ուսուցումն ավելի արդյունավետ կազմակերպելու նպատակով: Սեփական ջանքերով ստեղծված վկայություններից օգտվելով կարող ենք կշռադատված դատողություններ և հետևություններ անել: Դրա հիմքում ընկած է սեփական փորձառության քննադատական վերլուծությունը, որի նպատակն է հղկել և բարելավել ուսուցումը: Ժամանակի ընթացքում փորձարկված և ըստ այդմ հաջողություններ գրանցած մեթոդները դառնում են հետագա դասավանդման անբաժանելի մասը:

ՈՒՏՈՒՆԳՅԻ ՖԻՐԺԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ներկայացնենք իմ փորձառությունը, որի նպատակն էր դասարաններից մեկում ուսումնասիրել տարբերակված ուսուցման ազդեցությունը աշակերտների ուսման առաջադիմության վրա: Դասարանը, որտեղ անցկացվել է հետազոտությունը, հասցրել էի բավարար կարծիք կազմել աշակերտների գիտելիքների, կարողությունների և նրանց անձնային որակների մասին: Ստեղծվել էր փոխադարձ հարգանքի մթնոլորտ և լավ հարաբերություններ, որոնք կարևոր են համարում դասապրոցեսին: Դասարանը հոսքային է (ֆիզմաթ և տնտեսագիտական ուղղվածությամբ), սովորում են տասը տղա և մեկ աղջիկ, որոնցից մի քանիսը այս դասարան տեղափոխվել են տարբեր դպրոցներից: Սակայն աշակերտների մի մասը նվիրումով չէր վերաբերվում իրենց իսկ ընտրած առարկաների ուսուցմանը, որը լուրջ մարտահրավեր է ուսուցչի համար: Դասարանը աշակերտների գիտելիքների և կարողությունների առումով համասեռ չէր, կային ըստ կարողությունների և ըստ գիտելիքների տարբեր աշակերտներ և տարբերակված ուսուցման գաղափարն այս դասարանում արդարացված էր: Նախօրոք հայտարարել էի, որ մի քանի դաս պետք է անցկացնենք տարբերակման ձևաչափով և կատարել էի բաժանում երեք խմբերի՝ չորս, չորս և երեք հոգանոց, որտեղ հաշվի էի առել աշակերտների կարողությունները և առաջադիմությունը:

Առաջին խմբի աշակերտներն էապես տարբերվում էին մյուս խմբերի իրենց դասընկերներից, սակայն երկրորդ և երրորդ խմբերում տարբերությունը շատ մեծ չէ: Ինձ թվում էր, որ աշակերտներն ունենալու են տեսանելի առաջընթաց (ակնկալում են դրական, սակայն չեն բացառում, որ կլինեն նաև անակնկալներ): Ցանկալի կլիներ եական տեղաշարժ նկատել առաջին խմբում, որովհետև այդ աշակերտների դեպքում ունեցել են ներգրավվածության լուրջ խնդիր և ըստ այդմ էլ ցածր արդյունքներ: Երկրորդ և երրորդ խմբերում ավելի քան համոզված էի, որ արդյունքները գոհացուցիչ են լինելու: Նաև ասեմ, որ խմբերի բաժանման փաստը շատ զգուշավոր ներկայացրեցի, հավելելով, որ խմբերին ներկայացվելու են նույն խնդիրները, որոնք պարունակելու են տարբեր քանակով առաջադրանքներ, իսկ աշակերտները լուծելու դեպքում կարող են առաջ շարժվել, քանզի առաջադրանքները բաց են և տալիս են տարբեր հնարավորություններ: Բոլոր դասերի ավարտին աշակերտներն անանուն (իրական պատկեր ստանալու համար) լրացնում էին դասի գնահատման հարցաթերթիկ, քանզի

նրանց կարծիքն ինձ համար շատ կարևոր էր և կազմում էր հետազոտության կարևոր բաղադրիչներից մեկը: Յուրաքնչուր հարցը գնահատվում էր 1 -10 միավորային համակարգով: Հարցաթերթիկների վրա նշված էր միայն խմբի համարը և անսաթիվը: Աշակերտները տալիս էին գնահատականներ իրենց ներգրավվածության, դասընկալման մեջ հանդիպած դժվարությունների, տարբերակման և էլի մի քանի հարցերի վերաբերյալ: Հարցաթերթիկների վերլուծությունը կատարվել է ըստ խմբերի, օրինաչափությունների հայտնաբերման դեպքում կատարվել են համապատասխան եզրակացություններ::

Ուսուցչի դիտարկումները

Չետադարձ հայացք ձգելով հետազոտության շաբաթների ընթացքում իրականացված տասներկու դասերի վրա, կարելի է բազմաթիվ դատողություններ անել: Իհարկե, ի սկզբանե չեմ ունեցել ակնկալիքներ, որ ընդամենը տասներկու դասերի ընթացքում աշակերտների գրանցած արդյունքների առումով ունենալու ենք մեծ տեղաշարժ: Բայց այն, որ կիրառած մեթոդի համակարգված լինելու շնորհիվ ունենալու էինք ասելիք, ակնհայտ է:

Ամենակարևորը, դասարանի աշխատանքային մթնոլորտում փոխվեց կարևոր մի բան՝ բարձրացավ աշակերտների պատասխանատվության զգացումը: Փոխվեց տնային աշխատանքների կատարման որակը: Իհարկե, դա պայմանավորված էր նաև տնային առաջադրանքների մատուցման խիստ համակարգված և տարբերակված մոտեցմամբ: Պարզաբանեմ. դասագրքում առկա են բազմաթիվ խնդիրներ, որոնց լուծումը դժվարություն է առաջացնում թույլ սովորողների մոտ այն պատճառով, որ հարցադրումներն ամբողջական են և մի քանի քայլերով վերջնական արդյունքի հասնելը պահանջում է հմտություն, որը ոմանց կողմից հաղթահարելի չէ: Առաջին խմբում ինչպես տնային, այնպես էլ դասարանում առաջադրված խնդիրները բաժանված էին ենթահարցերի, որոնք իրենցից ներկայացնում էին առանձին խնդիրներ և որոնց քայլ առ քայլ լուծումը օգնում էր հասնել ավելի լուրջ արդյունքների: Դա հնարավորություն էր ընձեռում յուրաքանչյուրին ներդնել համապատասխան ջանքեր և ապահովում էր իր ներգրավվածությունը դասապրոցեսին: ‘Վերին’ խմբերում ստանդարտ լուծումների հետ մեկտեղ աշակերտները ջանքեր էին ներդնում ավելի խորը արդյունքներ ստանալու ուղղությամբ: Առաջին խմբում աշակերտները դժվարանում էին հենքային գիտելիքների բացակայության պատճառով: Այդ խմբում որպես էական ձեռքբերում համարել եմ երկուսի արդյունավետ մասնակցությունը դասերին: Նրանց մոտ նաև ցանկություն առաջացավ աշխատել երկրորդ խմբին համընթաց, բայց հետո զգացին, որ դա ժամանակավրեպ է, թեպետ առանձին հարցադրումների դեպքում նաև իրատեսական: Սա համարում եմ լուրջ ձեռքբերում և առաջընթաց: Չնայած մյուս երկուսի ներգրավվածության էական բարձրացմանը, նրանց մոտ առաջընթացն ավելի դանդաղ ընթացավ, որն ինձ համար սպասելի էր:

Ամեն ինչ շատ ավելի հետաքրքիր էր երկրորդ խմբում: Նրանց մի մասի դեպքում տարբերակումը լուրջ խթան հանդիսացավ սեփական ուսումնառությունը բարելավելու

համար: Նրանցից երեքի մոտ ցանկությունն առաջացավ ապացուցելու, որ իրենք ամենևին էլ չեն 'պատրաստվում տարբերվել' նախկինում գերազանց առաջադիմություն դրսևորած երրորդ խմբի աշակերտներից և տարբերակումը իրականում նրանց համար դառավ առաջընթացի մարտահրավեր: Նշված աշակերտների կողմից ներգրավվածության պակաս չգագցվեց և ոչ մի դասին: Առանձին դեպքերում այդ աշակերտները խելացի լուծումներով գերազանցեցին իմ ակնկալիքները: Վերջին դասերին նրանք աշխատում էին երրորդ խմբին հանձնարարված լրացուցիչ առաջադրանքներով:

Պատկերը մի փոքր այլ էր երրորդ խմբում: Առաջին մի քանի դասերին նրանց մոտ հանգստություն և ավելորդ ինքնավստահություն նկատվեց: Սակայն երրորդ դասին յուրացումը ստուգող առաջադրանքի կատարումից և շտկումներից հետո նրանք հասկացան, որ իրենց որպես 'գերազանց' տարբերակումը ավելի շուտ մեծ պատասխանատվություն և բարձր ակնկալիքներ է, որը լրջություն հաղորդեց իրենց մոտեցումներին: Երկրորդ խմբի աշակերտների ակտիվացումը նրանց ևս ստիպեց ավելի լրջորեն աշխատել սեփական 'կարգվիճակը' պահպանելու համար: Ասեմ, որ համեմատելով նախկինում ունեցած իրենց ձեռքբերումները, շատ մեծ տարբերություն չեմ կարող արձանագրել նրանց մոտ, կարծես թե օրինաչափ է այդ աշակերտների մշտական առաջադիմությունը: Ամեն դեպքում տարբերակումը հնարավորություն ընձեռեց նրանց հետ տարատեսակ խնդիրներ լուծել և խորը արդյունքներ ստանալ, որը նախորդ տարիներին նմանատիպ դասարաններում դժվար իրականացնելի էր: Սա համարում եմ տարբերակման ձեռքբերում:

Հիմա անդրադառնամ ամփոփիչ գրավոր աշխատանքի արդյունքներին: Նշեմ, որ այն իր մեջ ներառում էր խնդիրների լայն սպեկտր և ստացված արդյունքները թեկուզ ոչ շատ բարձր գնահատականներով հանդերձ, համարում եմ գոհացուցիչ: Հետաքրքիր էր, որ աշակերտները բացի մեկ երկու դեպքից, կարծես թե ստացել էին իրենց գիտելիքին համապատասխան գնահատականներ: Համոզված եմ, որ կիրառած տարբերակման մեթոդը և ջանքերը աշակերտների մոտ միանշանակ առաջընթաց գրանցեցին գիտելիքի առումով և որ կարևոր է, շատերի մոտ ինքնագնահատականի և սեփական ուժերի հանդեպ վստահության հետ կապված դրական տեղաշարժ նկատվեց: Նշեմ, որ հետազոտությունը նպատակ չի ունեցել գրանցել և ապացուցել աշակերտների կարճաժամկետ հաջողությունները, որն ըստ իս կարող էր և խաբուսիկ

լինել, այլև միտված է եղել թեկուզև փոքր առաջընթացի (կամ հետընթացի) դեպքում անհրաժեշտ հետևություններ կատարել՝ տարբերակման ռազմավարությունները հետագայում կիրառելու համար: Հակված եմ այն գաղափարին, որ կիրառված մեթոդի արդյունավետությունը փոքրաթիվ դասերի դեպքում տեղին չէ հիմնավորել թվանշային գնահատականի տեսանելի փոփոխությամբ:

Շատ կարևոր եմ համարում նշել, որ այս դասարանին զուգահեռ, միաժամանակ նույն առարկան դասավանդել եմ նմանատիպ մեկ այլ դասարանում: Դասարանները տարբերվում էին աշակերտների թվաքանակով, բայց ունեին ընդհանրություններ: Ի սկզբանե մտածել եմ, որ որևէ միջամտության ազդեցության արդյունավետությունը պարզելու համար պետք է զուգահեռաբար դիտարկել նմանատիպ ընթացք առանց այդ միջամտության: Մյուս դասարանում դասավանդումն իրականացրել եմ առանց տարբերակման մեթոդի համակարգված կիրառման, այսինքն դասավանդելով խառը ընդունակություններով աշակերտների խմբում: Սա համեմատականներ անցկացնելու լավ առիթ էր: Դժվարանում եմ ծանրակշիռ թվային տվյալներով զուգահեռներ անցկացնել, բայց ցանկանում եմ կիսվել իմ տպավորություններով: Հետազոտական դասարանում հնարավորություն ունեցանք թեմայի հետ կապված ավելի շատ խնդիրներ լուծել և ավելի խորը արդյունքներ գրանցել: Հետազոտական դասարանում ընդհանուր առմամբ աշակերտներն ավելի բարձր ներգրավվածություն դրսևորեցին, քան երկրորդում, ձեռք բերած գիտելիքի առումով նույնպես տարբերվեցին դրական իմաստով: Այդ տարբերությունը ինձ համար ավելի քան տեսանելի էր:

Դասերին ներկա են եղել դասալսողներ, որոնց կողմից նույնպես արձանագրվել է աշակերտների ներգրավվածության բարձր մակարդակ:

Եզրակացություն

Յուրաքանչյուր ուսուցչի կարևորագույն նպատակն է ցանկացած դաս դարձնել հասանելի բոլոր սովորողների համար: Հետազոտության արդյունքները հաստատում են, որ տարբերակված դասավանդումը հանդիսանում է աշակերտների առաջադիմության բարձրացման արդյունավետ գործոններից մեկը, ուստի տարբերակման ռազմավարությունների կիրառումը դասապրոցեսի ընթացքում ոչ միայն արդարացված է, այլ նաև անհրաժեշտ: Այն հնարավորություն է ընձեռում ուսումնառությունն ապահովել կրթական տարբեր կարիքներ ունեցող աշակերտների համար, ընդունելով, որ ցանկացած աշակերտ ունակ է առաջադիմելու: Բացի դա տարբերակումը լրացուցիչ խթան է աշակերտների ներգրավվածությունը դասի ընթացքում բարձրացնելու համար: Այն ուսուցչից պահանջում է հետևողական և քրտնաջան աշխատանք, նախօրոք պլանավորված քայլեր և ռազմավարություն, և միայն այդ պարագայում խմբավորումը դժգոհություններ չի առաջացնի աշակերտների մոտ: Չկա ընդհանրական մոտեցում և տարբերակման ռազմավարությունների ընտրությունը կախված է դասարանի առանձնահատկությունից, աշակերտների կարողություններից, գիտելիքներից և անձնային որակներից: Տարբերակման ռազմավարությունները պետք է արդյունավետ լինեն ինչպես ստորին, այնպես էլ վերին խմբերում՝ ստորին խմբերում ապահովելով թեկուզև դանդաղ, բայց կայուն աճ, իսկ վերին խմբերում աշակերտների մոտ չառաջացնելով գերարժեքավորում և չսահմանափակելով նրանց առաջընթացը:

Իհարկե, կիրառելով տարբերակում, կարճ ժամանակահատվածում չի կարելի ակնկալել սովորողների ակադեմիական առաջադիմության էական փոփոխություն: Որպես առաջադիմության ցուցանիշ տարբերակված ուսուցման ընթացքում պետք է վերցնել աշակերտների դասարանային և տնային աշխատանքների կատարման որակը, ներգրավվածության աստիճանը, համեմատելով այն մինչև տարբերակման կիրառման ժամանակահատվածի հետ: Նաև պետք է հիմք ընդունել աշակերտների կողմից լրացված հարցաթերթիկների արդյունքները:

Ինձ համար ընդհանրապես շատ կարևոր են աշակերտների կարծիքները և զնահատականները դասի, դասապրոցեսի և ընդհանրապես ուսումնական գործընթացների հետ կապված: Գտնում են, որ ուսուցիչը շատ հարցերի դեպքում ականջալուր պետք է լինի դասարանի արձագանքին և համոզված են, որ աշակերտների շրջանում օբյեկտիվորեն անցկացրած հարցումների պատասխանները

իրականության հայելին են և ուսուցչի համար հիմք են հանդիսանում կատարելու անհրաժեշտ դատողություններ և հետևություններ: Այդ իսկ պատճառով, դասի ավարտին աշակերտների կողմից անանուն (նշվում է միայն խմբի համարը) լրացված դասի գնահատման հարցաթերթիկները ուսուցչի համար կարող են օգտակար լինել աշխատանքները էլ ավելի արդյունավետ կազմակերպելու համար: Անկողմնակալ տվյալներ հավաքագրելու ակնկալիքով անհրաժեշտ է կատարել ոչ թե անհատական (թեպետ անհատական կարծիքները նույնպես շատ կարևոր են), այլ խմբային պատասխանների վերլուծություններ:

Տարբերակումը ուսուցչից պահանջում է մեծաքանակ ջանքեր և արհեստավարժ մոտեցում: Այն պետք է վարպետորեն կիրառել՝ բացասաբար չազդելով դասարանի բարոյահոգեբանական մթնոլորտի վրա: Տարբերակման ռազմավարությունները պետք է կիրառվեն դասավանդման մյուս մոդելների զուգակցությամբ, քանզի արդյունավետ ուսուցման հիմքում ընկած է մեթոդների, հմտությունների ճիշտ համադրությունը:

Գրականություն

1. Jo Boaler, Dylan Wiliam, Margaret Brown.(2000) *Students' experiences of ability grouping —disaffection, polarisation and the construction of failure*. British Educational Research Journal, vol. 26, No. 5, 631-648, London
2. McNamara. (1999). *Differentiation:An Approach to Teaching and Learning*. Cambridge: Pearson.
3. Petty, G. (2004). *Teaching Today:A Practical Guide*. Nelson Thornes.
4. Robert Coe, Cesare Aloisi, Steve Higgins and Lee Elliot Major. (October, 2014). *What makes great teaching?:Review of underpinning research*. London: Sutton Trust.
5. Абасов, З. А. (18-09-2004). *Дифференциация обучения: сущность и формы*.
6. Баринаова, О. В. (1999, January 01). *Уровневая дифференциация в обучении младших школьников решению текстовых математических задач*.
7. Мальцева, Е. В., (2013, January 01). *Использование дифференцированного подхода на уроках математики в начальной школе*. Вестник МГУ, Йошкар-Ола.
8. С.В.Курашева. (2009). *Практическая педагогика*. Тара: КМЦ ТФ ОМГАУ.
9. Building evidence into education by Ben Goldacre, “*Bad Science*”, March 2013
10. Brooks, V and Bills, (2012). *Preparing to Teach in Secondary Schools*. CH 6. “Using differentiation to support learning”.